ԼՈՅՍ

ՀԱՆԳԷՍ ԱԶԳԱՅԻՆ

Կը հրատարակուի Շորեքշաբթի եւ Շաբաթ օրերը։ Տարեկան գինն է մէկ լիրա օսմանեան։ Մէկ թերթը 40 փարա արծաթ։ Նամակ կամ ո եւ է գրութիւն պէտք է ուղղել Առ Մ. Գափամաճեան, կոստանդ-նուպոլիս, Մեհմեան չարշի Բիւշտի Էֆենտի խանի տակ Մ. Կ. Սարրեանի տպարանը։

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 135 — 1881 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 14 ՓԵՏՐՈՒԱՐ

ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ինչ կընէ Ազգ. Վարչութիւնն. — Այս է դրեթէ ամենուն հարցումն առհասարակ, եւ ինչու. — որովհետեւ ամեն մարդ անհամբերութեամբ կուզէ նոր դրութեամբ կազմեալ վարչութիւնը ներքին ինչ բարեկարգութիւններ կընէ, և անհրաժեշտ եղած բարեկարգութիւնները դործադրելու համար ինչ միջոցներ ձեռք առնուլ սկսած է։

Մեք սոյն հարցմանց չեմք կրնար առայժմ գոհացուցիչ պատասխան մը տալ, վասն զի Վարչութիւնն իր կազմութենէն ի վեր Կիլիկիոյ կաթողիկոսական, Սեբաստիոյ, Մշոյ, Եւդոկիոյ, Դիւանաւատն և ուրիշ մեկ քանի խնդիրներով զբաղած է, որք իրրև օրուան խնդիր՝ մեծ կարեւորութիւն ստացած են, և հետեւաբար հանրական անհրաժեշտ խնդրոց հիմնական կարգադրութիւնն եթէ ոչ բարձի թողի եղած՝ սակայն յետաձգուած կը թուի, ի բաց առեալ պատրիարքութեան խնդիրն, որ արդէն Ազգ. ժողովոյ առեւանն ելած է։

Իրաց վիճակին բնական անհատնական չթուիր թէ տակաւին դրիչ պատասխանատու խնդիրներ ալ ծագին, խնդիրներ, որք հարկաւ խորին ուշադրութեան և փութաջան գործունէութեան կը կարօտին, որով և Վարչութիւնը ներքին կարեւոր խնդրոց կարգադրութիւնն անպայման ժամանակաւ յետաձգել սահպուի։

Արդ, այսպիսի պարագայի մը մէջ ինչ պէտք է ընել։

Ըստ մեզ՝ Վարչութիւնը պէտք է որ դոնէ խորհուրդ մասնաժողով մը կարգէ, պաշտօն տալով նմա որպէսզի քննէ հիմնովին թէ մեր ազգային ներքին վիճակին բարւոքմանն համար ինչ բան հարկաւոր է, ադոյ դարմանին ինչ բանի մէջ է և ո՛րպիսի միջոցներու կը կարօտի։

Դաստիարակութեան խնդիրն զատ՝ տուպղական են նաև դատաստական վարչութեան

կազմակերպութեան, առաջնորդական վիճակայ բաշխման, վանօրէից բարեկարգութեան, դաստուական այցելութեայ և ուրիշ եկեղեցական խնդիրներ, որոց վրայ արդէն շատ բան գրած և ամէն ուշադրութիւն հրաւիրած ենք։

Պատահական ծանր խնդրոյ կարդադրութեանն համար Վարչութեան տարած ջանիքը նկատմամբ Ազգն իր գոհունակութիւնն յայտնելու պատճառ՝ չմոռնար նաև ներքին վիճակի բարւոքման խնդիրն՝ որ այսօր ամեն ժամանակէ աւելի ընդհանուր ուշադրութեան առարկայ եղած է, և ահա Ազգը նոր դրութեամբ կազմեալ ներկայ Վարչութենէն իրաւամբ մեծ բաներ կ'ապասէ։

Մենք իրրև թարգման հասարակայ կարծեացը՝ պատշաճ դատեցինք յիշեալ առաջարկութիւնն ընել, որ կը յուսամք թէ Վարչութեան հաւանութեամբ կարժանանայ։

ԵՐԵՍԻԹԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ա.

Թաղերն ու դաւառները նոր ընտրութեանց համար հրահանգ պրկուած է, թէ ոչ, չենք գիտեր, բայց սա գիտենք թէ ընտրութիւնք ըստ օրինի փետրվար ամսոյ մէջ կը կատարուին։

Ընտրութիւնք փետրվար ամսոյ մէջ դատարուելուն համար հրահանգները պէտք կըլլայ որ աւելի կանուխէն պրկուին։

Եթէ մինչև հիմա չեն պրկուեր, չըսեմք ուրիշ բան՝ կարելի է մոռացում տեղի ունեցած է, և ահա կը փութամք յիշեցնել։

Անցնելիք խնդրոյն, — ժողովուրդն ըստ օրինի պիտի հրաւիրուի իր ընտրական իրաւունքը գործադրելու, կամ ուրիշ կերպով ըսելով Ազգին չհնդրն ու իրաւունքները պահպանելու և Ազգին վիճակը բարւոքելու համար իր կողմէն լիազօր երեսփոխաններ ընտրելու։

Ահա խնդիրն հոս է թէ ընտրելիք ի՛նչպէս մարդիկ ըլլալու են։

Այս մասին մեր կարծիքն ու համոզումն այն է որ ժողովուրդը պէտք է Ազգին վիճակը, ներկան ու ապագան աղեկ քննէ, և նախ ձեռքը խղճին վրայ դնէ ու ապա տայ իր քուէն անոր՝ որ ազգին երեսփոխանը պիտի լինի։

Ըսել է ուրեմն թէ քուէն խղճի խնդիր մ'է միանգամայն։

Ի՞նչ կընէ մարդ իր անձնական մեկ իրաւունքը վտանգելու համար երբ հարկ ըլլայ իր կողմէն մեկը փոխանորդ կարդել. — ե՞ր համար արդեօք մեկը կընտրէ, թէ իր իրաւունքն իրօք ձեռք բերելու կարող մարդը կը փնտռէ, աղեկ մը հարցուփորձ կընէ, կը հետևի, կը քննէ և ապա փոխանորդ կը կարգէ գայն. — հարկաւ ե՞ր համար չընտրեր. այլ իր իրաւունքը պաշտպանելու իրօք կարող մեկը կը դտնայ։

Երբ մարդ իր անձնական իրաւունքին համար այսպէս կը վարուի, դոնէ կըսեմք առիթ պակաս մտածելու չէ ազգին երեսփոխանն ընտրելու համար. — ինչո՞ւ. — որովհետև երեսփոխանութիւնն Ազգին ընդհանուր շահերն ու իրաւունքները պաշտպանելու և ազգին ներկան ու ապագան խորհելու և բարելաւելու պաշտօնն ունի։

Արդ, երբ ժողովուրդը կընտրէ այնպիսի անձինք՝ որ անունի և երևնալու համար միայն պաշտօն կընդունին, որ թէպէտ մեծ անուն և համբաւ ունին և սակայն կամ ճշմարիտ ազգասէր չեն և կամ իրենց պաշտօնին վրայ գաղափար անդամ չունին, որ կարող ու արժանաւոր են, բայց կամ ժամանակ չունին և կամ օրուն մեջ ծառայել չեն ուզեր, և կամ այնպիսի անձինք՝ որ արատաւոր անցեալ ունին, դատապարտութիւն կրած են,

ազգին շահն իրենց անձնական շահուն և կրնայը զոհած են ու կը զոհեն, խիղճ և սիրելու չունին և թէ խարդաւանիչ են։

Առանք այնպիսի պարագաներ են, որոց մեծ ուշադրութիւն ընել պէտք կըլլայ։

Ով պիտի ընէ զայս. — այն՝ որ ընտրելու իրաւունք ունի։

Հոս կը վերջացնեմք մեր առաջին յօդուածն և կըսեմք, ընտրողք ժողովրդեան մը յարգած ըլլալու համար քուէի մասնակցելու չեն, այլ ազգային ամենամեծ իրաւունք մը վայելելու համար։

Անոնցի իրաւունք մ'է այս, զոր բացատրելու համար սա կըսեմք թէ ազգային շահուց և իրաւանց անվթար պահպանութիւնն և Ազգին ներկան ու ապագան անկէ կախուած է։

Ուստի փոզվուրդն իր ամբիք քուէին այսօրուընէ պէտք է որ պատրաստուի։

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Գեր. Մեսրոպ եպիսկոպոսի բողոքագրին պատճէնն Հանդիսիս վերջնդիմել թուղթը հրատարակեցինք։

Մեք բնաւ չսիրտ խօսիմք ի պաշտպանութիւն յիշեալ եպիսկոպոսի խնդրոյն, որ մասնաւոր է, և մեք մասնաւորութեան հետ գործ չունինք։ Մեր գործը միայն սկզբունքի և հանրական խնդրոց հետ է։

Մեք յիշեալ բողոքագրին մէջ սկզբան կէտ մը առանք, որուն վրայ կուզեմք հոս քիչ մը խօսիլ։

Գեր. Մեսրոպ եպիսկոպոս կըսէ «ամբաստանեալ ըլլալը կը հաստատամ, բայց քննութեան և դատաստանի չկանչուիլը չեմ կըրնար հաստատել»։

Այս լակոնական խօսքին տակ ծածկուած է մեծ սկզբունք մը, որ մեր բուն դիտած կէտն է, որ է արդարութիւն կոչուած բանը։

Մեսրոպ եպիսկոպոս խիստ ծանր ամբաստանութեանց ենթակայ է, և ահա Պոլիս բերուեցաւ. — ազէկ, սակայն ինչ նպատակաւ բերուեցաւ. — Պոլսոյ օդն ու ջուրը վայելելո՞ւ համար։ Եթէ այս նպատակաւ բերուեցաւ, Պատրիարքարանի կողմէ այնքան աճապարանք և իրար անցուցմ բնաւ հարկաւոր չէր, և ազգիս մէկն ալ նշանակութիւն չունէր և չունի։ Իսկ եթէ արդարութիւն ըլլալու համար Պոլիս բերուեցաւ, ինչո՞ւ քննութիւն և դատաստան չըլլար։

Պատրիարքարանն արդարութիւն ընդունելով եթէ ամբաստանեալ առաջնորդ մը միայն Պոլիս բերելը կը հաստատայ և ազգովի կը բանտանայ, կը հետևի թէ մեր Պատրիարքարանը տակաւին իր հին դրութեանը կը հետևի, և մեք ազգը վրայ բնաւ չենք տարակուսիր, որովհետև թաղումք հին առեններն և ահա վերջին 3—4 տարուան միջոցին բազմաթիւ առաջնորդներ Պոլիս կանչուեցան, ինչպէս են Գեր. Դերձակեան Արիստակէս, Տիգրանեան Մկրտիչ, Մամբրէ և Փիլիպպոս եպիսկոպոսներն ու Գեր. Բագրատունի կարապետ վարդապետը. բայց ինչ եղաւ հետևանքը. — ոչինչ. որովհետև քննութիւն և դատաստան չեղաւ որպէս զի հասկցուեր թէ ազգոյ վրայօք եղած ամբաստանութիւնք առտյգ և իրակա՞ն էին; թէ ոչ։

Մամբրէն գնաց իր աեղը. Տիգրանեան պաշտօնով պիտի երթայ կըսուի, Դերձակեան Սամաթիոյ և Բագրատունի կէտիկ—Բաշայի մէջ պաշտօն կը վարէ, և հաւանականաբար Մեսրոպ եպիսկոպոս ալ քիչ առենէն կամ Նորէն Եգիպտոս և կամ ուրիշ տեղ մը երթայ։

Ահաւասիկ վիճակ մը, որ խիստ լաւ կը բացատրէ մեր Պատրիարքարանի ոգին և սկզբունքը, սկզբունք մը, որ տարակոյս չկայ թէ խիստ չարաչար է, և որոյ հետե-

անքն ուրիշ բան չէ, բայց եթէ սա թէ՝ առաջնորդ մը կրնայ կատարեալ վստահութեամբ իր ուղածն ընել, որովհետև չատ չատ միայն Պոլիս կանչուելով խնդիրը կը լմննայ։

Ս. յոպհաննի վիճակի մը մէջ, այսինքն՝ քանի որ արդարութիւն չգործադրուիր և քանի որ պատժոյ և վարձատրութեան սկզբունքը չգործադրուիր, ի՞նչպէս կարելի է լաւ առաջնորդներ ունենալու յոյս տածել. — ասոր բնաւ մեր խելքը չհասնիր և հասնելիք ալ չունի, քանի որ դրութիւնն այս է և չը փոխուիր։

Մեր յառաջդիմութեանն համար ինչո՞ւ պէտք կը մեղադրեն և ինչո՞ւ մեր ընթացքն Ազգին համար յուսահատեցուցիչ կանուանեն, քանի որ մեր ազգային պաշտօնական դրութիւնն արդէն բնաւ քննադատական չէ։

Մեր այս բսածին ալ թո՛ղ չզարմանան. ահաւասիկ օրինակը. — Մեսրոպ եպիսկոպոս դրեթէ 3 ամիս է որ հոս է և ա՛լ հասկերութիւնն հասնելով եկեր հրապարակաւ արդարութիւն կաղաղակէ։

Ի՛նչ պատասխան արուեցաւ. — Դատական խորհրդական էֆէնտին կը բարեհաճի՞ արդեօք ասոր ալ պատասխանն հրապարակաւ տալ. — Տեսնենք։

Հոս վերջացնելով մեր խօսքը՝ կըսեմք դարձեալ՝ մինչև որ պատժոյ և վարձատրութեան սկզբունքն՝ որ արդարութեան սկզբունքն է, չսկսի մեր մէջ գործադրուիլ, վարչութեան ձևն ինչ տեսակ դրութեան ալ փոխուի, անունը նոր՝ բայց հոգին միշտ հին կը մնայ, և ահա այսպիսի վիճակէ մը չեմք կրնար Ազգին համար ապագայ ակնկալել։

Իրական ապագայի հասնելու համար պէտք է որ մտայ մէջ նախ կարծեաց, դասակարգի և սկզբան յեղաշրջութիւն գոյանայ։

ԻՐԱՑ ՎԻՃԱԿ

Երևոյթներէ դատելով կը դուշակենք թէ իրաց վիճակը պիտի ծանրանայ։

Մեր դուշակութիւնը դժբաղդաբար կատարուելու կերպարան մ'առնուլ սկսած է։

Դժբաղդաբար ըսինք, որովհետև մեք իրաց վիճակին ծանրութենէն պիտի չկրնանք օգուտ քաղել, և ընդհակառակը մեծապէս պիտի ձլատուինք, որովհետև առանց նայելու մեր ոչ—նախապատրաստակ վիճակին՝ որուն վրայ այնքան կը դրեինք և ընդհանուր ուշադրութիւն կը հրաւիրեինք, միայն աղմուկ յարուցանելն և առուէրի եռանդ երթալը բաւական կը համարուէր, և սակայն ահա ժամանակը կուգայ հաստատելու թէ ամենայն ձախողութեան պատճառը մեր չհասկացողութիւնն և մեր ձախող ընթացքս հետևութիւնն է։

Ս. յս խօսքերը կարծեմք բացատրութեան պէտք չունին և ահա քիչ չատ խորհելու կարողութիւն ունեցող անձինք մեր այս տողերուն հոգին և իմաստն աղեկ կը հասկնան։ Ամեն մարդ ալ կրնայ հասկնալ, եթէ անցած անցքերուն և դարձուածոյ քիչ մ'ուշադրութիւն ընէ, որմէ դիւրաւ կրնայ մակարերել այն ահագին վտանգն՝ որ կ'սպասենայ, և ժամանակ է որ մեր բոլոր ուշադրութիւնը սա կէտին վրայ դարձնեմք թէ գԱզգն սպառնացող վիճակէ մ'աղատելու միջոցն ու եղանակն ի՛նչ է։

Խոհեմութիւն և չբջահայեցութիւն կը յանձնարարեմք։

Կը յուսամք թէ այսքանը բաւական է։

Իրաց վիճակին ծանրութիւնն հաստատող ծանուցեալ պարագաներէ զատ՝ հարկ կը համարիմք հետևեալ հատուածն ալ մէջ բերել, որ վանէն Մեղուի դրուած նամակէ մը քաղուած է։

«Վանէն առնուած լուրերը չատ անմխի-

թատրական են, դպրութիւն, բռնութիւն և խիստ հոգեհանութիւն առօրեայ են. հաւքսատարութեան չափն անցած է, որ երկու Հայ խօսին, կառավարութիւնը նոցա վրայ կը կասկածի»։

ՋԱՆԱՋԱՆՔ

Ցփղխէն հեռագիրները կը գրեն՝ «կարսէց մեզ գրում են թէ՝ գեկտ. 31 ին, անցած 1880 թուի, Գ. Գ. Բժիշկ Կաճկաճեանց և Բժիշկ Դաղարոսեանց երեկոյթ մի սարքեցին կարսի թատրոնական դահլիճին մէջ։ Այդ երեկոյթի ժամանակ Գ. Խոսրով Աբասեան, Հայ—կաթոլիկ երիտասարդ մի, շատ գեղեցիկ և ոգևորիչ ճառախօսութիւն արաւ ազգի միութեան մասին։ Մի և նոյն Գ. Աբասեան առենաբանութիւնից յետոյ նուիրեց իր և իր ամուսնու ակիկին Զաքէլի կողմից 50 րուբլ յօգուտ վանի սովեալների։ Այդ երեկոյ հաւաքվեց ընդամենը 260 ր. յօգուտ վանի սովեալների։ Հայ—կաթոլիկ ազգասէր երիտասարդի առենաբանութիւնը մեծ տպաւորութիւն գործեց բոլոր լսողների վրայ»։

—Ռուսական լրագիր մը կը գրէ թէ՝ «կարսի նահանգի նահանգապետ գեներալ Ֆրանկինի իր պաշտօնից հրաժարական տուել է հիւանդութեան պատճառով։ Ն. Բարձրութիւնը ընդունել է գեներալ Ֆրանկինու հրաժարականը»։

—«Ընթերցողին յայտնի է, որ յունվար 7 ին Բագուի հայ թատրոնասէրները ներկայացրին քաղաքային կլուբի դահլիճում Սանդուկեանցի «Խաթաբալա» պիէսան։ Այժմ մեզ գրում են, որ այդ ներկայացումից գոյացաւ 460 րուբլ արդիւնք, որի կէսը վրճռըված է սալ «Մարդասիրական» ընկերութեան ընթերցարանի օգտին, իսկ միւս կէսը Կ. Պոլսի «Մխիթար» ընկերութեան օգտին»։

ԿԱԹՈՂԻԿԱՑ ԽՆԴԻՐԸ

Հասունեան և Հակահասունեան կուսակցութեանը միանալու խնդիրը տակաւին բանակցութեան մէջ է։

Մեր լսածին նայելով եկեղեցականք կուզեն եղեր որ նախ ժողովուրդն հաշտուի. իսկ ժողովուրդն ալ կառարկէ եղեր թէ՝ ըստ ուրում բաժանումը պնողը եկեղեցին էր, թող նախ եկեղեցականք իրարու հետ հաշտուին և ժողովուրդին միջամտութեանը դործ չթողուն։

Խնդիրն ահա այս վիճակին մէջ է տակաւին, սակայն յոյս կայ թէ Արհիապատիւ Ազաթեան արքեպիսկոպոսի իմաստուն չանիցն և խոհեմութեան շնորհիւ քիչ առենէն կարդադրուի և իր վերջնական լուծումն առնայ։

Ցիշեալ երկու առարկութեանց նկատմամբ մեր կարծիքը պիտի փութամբ յայտնել յաջորդ թուով։

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Ի նպաստ Հայոց Միացեալ Ընկերութեանց ամսոյս 19 ին տրուելիք պարահանդէսի մասնաժողովոյ մեծ. անդամից չանքը մասնաւոր գոհութեան արժանի է, մանաւանդ Ազաթեան Յովսէփ և Կիւմիւշկերտանեան Գրիգոր էֆէնտիներն, որք մեծ եռանդով կ'աշխատին։

Կրնամք լի վստահութեամբ յուսալ թէ այսպիսի մեծամեծ չանքերու շնորհիւ բաւական մեծակակ արդիւնք մը պիտի գոյանայ, որ, ինչպէս յայտնի է, գաւառական Հայոց մուսաւոր զարդացմանն յատկացեալ է։

Պարտ կը համարիմք յատկապէս յորդորել և հրաւէր կարդալ ամեն կարդի ազգայնոց որպէս զի ազգասիրաբար ինքնայորդոր յօժա-

բուլթեամբ ընդունիլ իրենց մատուցուած առաջակները։

ԳՈՒՄ—ԳԱՐՈՒԻ ՄԻԱՑԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆՔ

Ծիշեալ վարժարանաց վիճակին նկատմամբ ժողովրդեան մէջ գանգատներն երթալով կաւելնան դժբաղդաբար։

Առ մեզ ուղղեալ դրութեան մը մէջ, որ պատուաւոր ատորագրութիւններ կը կրէ, տեղի գտած գանգատներն ու դժգոհութիւնները միաձայնաբուած են։

Մեք յիշեալ դրութիւնն հրատարակելէ առաջ պարտք կը համարիմք Միացեալ վարժարանաց Պատ. Հոգաբարձութեան ուշադրութիւնն հրաւիրել և առաջարկել օրպէսզի քարեհաճի թաղային ժողով հրաւիրել անմիջապէս, որ պարագային նկատմամբ անհրաժեշտ կը թուի, որովհետև այս միջոցաւ կրնայ Միացեալ վարժարանաց գոյութիւնն ապահովել և վերջ տալ այն անհաճոյ տպաւորութեան՝ որ տեղի գտած գանգատներուն պատճառաւ յառաջ եկած է։

Հետևեալն՝ որ լուրջ քննադատութիւն մ՚է, կը փութամք հրատարակել։ Մեր դիտողութիւնն յետոյ։

. . . Խմբագիր «Լոյս» Հանդիսի.

Ազգ. վարչութիւնն 3000 դրչ ամսական թոշակի յատկացման վարկի առաջարկ մը բերաւ Ազգային ժողովին վերջին նիստին։ Թաք՝ ինչպէս իրեն եւ բոլորին՝ նոյնպէս իրեն խմբագիր այդ առաջարկը պաշտպաններ էիք ձեր չորեքշաբթի առաւ թերթին մէջ։

Այս պաշտպանութեան համար քանի մը դէպ խառը փաստեր յառաջ բերած էիք, զորս քննադատել կը պարտաւորիմ, և կը յուսամ որ այն քննադատութիւնեաց դարձեալ ձեր թերթին մէջ հրատարակել կը բարեհաճիք։

Ա. Կըսէք թէ քանի որ Վարչութիւնը պէտք ղպացեր է վարկ մը խնդրելու և կը սպասէ անոր վրայ, ղպան մերժելն քան խորհրդարանական դրութեան՝ նորա վրայ վատահութիւն չունենալ կենթադրէ, որմէ հարկաւ կը հետևի նորա հրաժարումը։

Եթէ այս սկզբունքն ընդունիմք, Վարչութիւնն ինչպէս որ ըսած են պատրիարքներն՝ իրենց հրաժարման ատենաղրեայ ներքև միշտ առաջարկներ պիտի կրնան բերել, և անոնց ընդունելութեանն ալ կանխաւ ապահով մնալ։ Ան առեն Ազգային ժողովոյ հեղինակութեան և ազատ քննութեան իրաւունքն ո՛ր կը մնայ, խորհրդարանական դրութիւնն պարզապես խաղալիկ և կամ խաղափակ մը դարձած պիտի ըլլայ Վարչութեան ձեռքը, և զոյն իր ազատ կողմը պիտի տանի կամ ուղղէ։ Եւ արդէս ալ խորհրդարանն իր ազատ քննադատութեան իրաւունքը պահէ, ատոր տրգիլը եղաւ որ և է միջոցներ առաջարկ կոխել անցնելու է, բանի տեղ չդնելով ամենայն հրաժարական։

ՔՆՆԱԴԱՏ

(Ց-ԼՐԴ Թ-ՎԻ)

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

Համաղուած ըլլալով որ օտարականին երաչխաւոր եղողը միշտ չարեաց կը յանդիպի և կը տուժէ, ամուսնացող երիտասարդը պարտէին գրաւ առնուլ իւրաքանչիւր զանի որ ըստ ամենայնի երաչխաւոր կըլլան իրենց առնելիք ապիկան, և այս գրաւն է կարծեմ՝ ղոր օրիորդք իրենք կը վճարեն երիտասարդաց պրաճօճա անուամբ, խալաւուկներուն անկարողութեան պատճառաւ։

* * *

Երիտասարդ ընթերցողաց խնդրանայ առանց ակնոցի կարդալու, մայրաքներու քովէն անցած ժամանակ իրենց բուրդին մի մասն միշտ հան թողուլ խաչանց պիտի նմանեցնեմ

այժմեան երիտասարդայ ու օրիորդայ մեծամասն մասն, որք իւրաքանչիւր վայրկեան իրենց աղնիւ կենաց անդին թելերն զայրալի մոլութեանց կը նուիրեն անխոհեմաբար։

* * *

Հայկական Ս. Եկեղեցւոյ օրինայ բազմակնութիւնը և կնաթողութիւնը արդիւնեալն հակառակ՝ կը տեսնեմ բազմաթիւ այրեր և կիներ որք տարինելէ ի վեր ամուսնական դրոշակ պարզած, այդ օրէնքներն տապալել կը ճգնին բանիւ և արդեամբ, այս տարի մանաւանդ խիստ չատեր հալածական այդ դրոշին, արդի երիտասարդութեան մի մասն արդէն դրոշակի ներքև կոչուած է, և օրիորդայ չատերն ալ կանխաւ հալածականութեան խոստում տուած են։

* * *

Բացառութիւններն յարգել պարտաւոր ըլլալով հանդերձ, կը մտածէի իրը մի ամենահատարեալ անկարելիութիւն հռչակել՝ արդիս մի ամենակատարեալ պարկեշտ, հաւատարիմ և միանդամայն առաքինի կին մը դտնելը, սակայն վախնալով որ դուցէ նորատի կանանց ու օրիորդայ սրտերն վիրաւորիմ, այս մտադրութենէս հրաժարեցայ խոկմն։

* * *

Ինչպէս չաքարը ակռաներուն և ծոխն ալ ատոյ կը ջնասէ, այնպէս ալ անհաւատարիմ կինն կը ջնասէ անբնդհատ թէ իրեն, թէ երկանը և թէ իւր հոմանեաց։

* * *

Իւր նորատի ազջիկն ծերի մը հետ ամուսնացնել, ձմեռուան եղանակի մէջ անոր պատպատակ կերցնելու կը նմանի, որ չուզենալով և բռնութեամբ կուտէ։

* * *

Երիտասարդք՝ սիրոյ առևտուրին մէջ այնչափ խարդախ և անհաւատարիմ են ընդհանրապէս, որ եթէ կարելի ըլլար իրենց նուրբն աչխարհ գալ և ազջիկ ծնեին, երկիր մարդոց խօսքին ամենևին չհաւատալէ զատ՝ զանոնք իրրև նենդիչ սատանաներ պիտի նզկատէին միշտ։

* * *

Սէրը մի այնպիսի ոգի է, որ զինքը պատրուակող ամանին կը ջնասէ անբնդհատ։

* * *

Սէրը մի անուշաբոյր ծաղիկ ալ կը նըմանի, հեռուն եղած ատեն խիստ գեղեցիկ կը բուրէ, բայց քանի մօտենաս, կը գինովցընէ, կը ջնասէ և երբեմն կը թունաւորէ իսկ։

* * *

Սիրահարները ընդհանրապէս միշտ վաղահաս կործանման ենթակայ են. սիրահարութիւնը մի որդ է՝ որ անդադար մարդկային չէնքին հիմերն կը կրծէ, Մաթոս ազա անշուշտ ինն հարիւր տարի չափած կարենալ ապրիլ, եթէ սիրահարութիւն ըրած ըլլար։

* * *

Ս. յն միամիտ երիտասարդը՝ որ նախկին ապականեալ դարուս ամուսնանալու միտք ունի, և միանդամայն պարկեշտ, հաւատարիմ, գործունեայ, անտեսադէտ, միով բանիւ՝ ամենազգի բարեմասնութեամբ օժտեալ, նահապետական դրութիւնն յարգող, նա մանաւանդ իւր լեզուին չտուող կին մը կուզէ գտնել, ուղղակի պարտի Ուզուն Հարչը Զըխըրլիներուն դիմել։

ՃԻՎԱՆ

ՕՆԱՆՈՒ ՄԵՂԸԸ

ԿԱՄ

ԳԻՋԱԿԱՆ ԱԽՏԵՐՈՒ ՀԵՏԵՒԱՆՔԸ

ՀԵՂԻՆԱԿ ԹԻՍՕՍ

Թարգմանիչ Եղիազար Մ—բաեան

Ոյն պատուական գործը, որ Թիսեոս մեծանուն գաղղիացւոյն դրչին արդիւնքն է, եւ որ տեսակին մէջ ընդհրցման արժանի մէկ հատիկ գիրք մ՚է, անհրաժեշտ համառանդ երկու սեռի երիտասարդաց՝ որոցմէ շատերն ատ՚ղ, չարաչար մահուամբ դերեզման կիջնեն, սխալ հասկնալով կենաց ճշմարիտ հեշտութիւնները, Հայրեր, մայրեր, դաստիարակներ կը հրաւիրուին օգուտ քաղել այս դերազանց գործէն, մանաւանդ դաստիարակներ՝ որոց յանձնուած է պատանեկաց բարոյական եւ նիւթական կենաց ուղղութիւնը։

Կեդրոնատեղին է Ղալաթիա 6. Արշակ էֆէնտիի վաճառատունը, կը ծախուի նաեւ Ս. Պօլիս Ջրաւաճառ Պօղոս աղային խանութը, Մուրթան Համամի դրան կից թղթավաճառ Գեորգեան Աւետիս էֆէնտիին մաղազան, եւ ամեն գրաւաճառաց քով. դին 6 ղրուշ։

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ

Գրեց 6. 6. Պարոնեան

Հրատարակէր Ս. Ղ. Պարթիզպանեան

Ազգային ժամանակակից վէպ մ՚է, որ առաջ առ առաջ սկսած է հրատարակուիլ, հետզհետէ ուռճացած է ընդարձակ ըլլալով, կը ծախուի գրաւաճառ Ս. Ղուկասեան եւ Ֆրէնկեան գրատուներէն, սուճի Պօղոս աղային խանութը եւ լրագրավաճառներու քով ի դին 40 փարայ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

—

ԴԱՍԱԳԻՐՔ

ՍԱԶԱՑԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Վէնետոյէ տպագրուած

Փափազեան Մուրատ էֆէնտիի աշխատասիրած ազգային Պատմութիւնն բաւական ժամանակէ ի վեր սպառած ըլլալով, այս անգամ վեցերորդ տպագրութեամբ ի լոյս ընծայուեցաւ Ս. Ղ. Պարթիզպանեան տպարանէն։

Գինն աւելի դիւրամատչելի եղած է, 5 1/2 ղրչ. որ կը ծախուի Հայ գրաւաճառաց քով, կեդրոնատեղիք են Բիզա փաշա խան թիւ 3 Ս. Ղ. Պարթիզպանեան տպարանը, և Ս. Ղուկասեան գրատունը ուր ազգային վարժարանաց համար մանաւանդ ղեղչ կըլլայ եթէ 10 էն աւելի ծախու առնուի։

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հանդիսիս տպարանին մէջ ամեն տեսակ գիրք, տետրակ, տոմսակ ևն խիստ մաքուր և աժան գնով կը տպուին, և ամեն կարգի յաճախորդք ըստ ամենայնի գոհ կ՚ըլլան։

ԱՐՏՕՆԱՏԷՐ
Հ. Ե. ԴԻՄԱՔՍԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ
Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՔԱՅԷԼ ՍԱՐԸԵԱՆ
Մէրճան չարչի Բիւշտի Կ՚Պ. խանի տակ Թիւ 20